ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/65 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

«19» օգոստոսի 2019թ.
ժամը՝ 11:45

ք. Երևան

Մասնակցում էին՝

**Հանձնաժողովի նախագահ՝**

Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքեր-շինությունների պահպանման բաժնի պետ.

**Անդամներ՝**

Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)

Գարիկ Բոյաջյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ,

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ,

Տիգրան Ալեքսանյան՝ ԱԻՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող.

Բացակայում է.

Արթուր Շահինյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, փ/ծ փոխգնդապետ,

**Հանձնաժողովի քարտուղար՝**
Անահիտ Եղիազարյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

Տեսախցիկի և օժանդակ պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված **ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/65** ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային www.armeps.am համակարգի միջոցով բացվել են 19.08.2019թ-ին, ժամը 11:45-ին, ք.Երևան Դավիթաշեն 4, Ա.Միկոյան 109/8 հասցեում:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Կազմակերպության հասցեն |
|---|---|---|
| 1 | «Ինտ Մենտաս Գրուփ» ՍՊԸ | ք. Երևան, Գալշոյան փ. 36/51, nerses.manukyan@yahoo.com |
| 2 | «ՊՌՈ Ինվեստ» ՍՊԸ | ք. Երևան, Արռույան փ. 66, 10 բն, proinvestone@gmail.com |
| 3 | «Կոմպմարկետ» ՍՊԸ | ք. Երևան, Դավթաշեն 4 թղմ. 2բն, info@comp.am , compyrvn@mail.ru |

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0**

3. **Տվյալներ՝ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան,

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0**

4. Գնման առարկաների նախահաշվային գները և մասնակիցների առաջարկած գները.

| չ/հ | Գնման առարկայի անվանումը | Նախահաշվային գին | Գնային առաջարկներ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | «Ինտ Մենտաս Գրուփ» ՍՊԸ | «ՊՌՌ Ինվեստ» ՍՊԸ | «Կոմպմարկետ» ՍՊԸ** |
| 1 | Հեռուստատեսության փակ համակարգի տեսախցիկներ, եռոտանի | 3.430.000 | 3.333.000 | | |
| 2 | Անուցման մարտկոց | 168.000 | 168.000 | | |
| 3 | Չիպի ընթերցիչ սարք | 37.000 | | | |
| 4 | Օպերատիվ հիշողության սարք | 88.000 | 88.000 | | |
| 5 | Նեոնային լամպեր | 126.000 | | | |
| 6 | պատյաններ | 260.000 | 260.000 | 260.000 | |
| 7 | բարձրախոսներ | 382.000 | | | |
| 8 | համակարգիչ ամբողջը մեկում | 1.455.000 | | | 1.198.000 |

**-ով նշված մասնակիցը հանդիսանում է ԱԱՀ վճարող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

5. Տվյալներ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
Հարցումներ չեն ստացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

6. Հանձնաժողովը որոշեց՝
1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի ա/ պարբերությունը, նիստը կասեցնել մինչև 21.08.2019թ ժամը 11:00 և «Ինտ Մենտաս Գրուփ» ու «ՊՌՌ Ինվեստ» ՍՊԸ-ներին 6-րդ չափաբաժնի մասով հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:
2. Հաջորդ նիստը հրավիրել 21.08.2019թ ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

*21.08.2019թ ժամը 11:00*

ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/65 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի շրջանակներում 6-րդ չափաբաժնի մասով հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին մասնակցել են «Ինտ. Մենտաս Գրուփ» ու «ՊՌՌ Ինվեստ» ՍՊԸ-ները: Վերջիններս ներկայացրել են վերանայված գնային առաջարկ:

| Չափա-բաժինների համարները | Մասնակցի անվանումը | Գնային առաջարկ | | |
|---|---|---|---|---|
| | | Արժեքը | ԱԱՀ** | Ընդհանուր գինը |
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 6 | «Ինտ. Մենտաս Գրուփ» ՍՊԸ | 248000 | 0 | 248000 |
| | «ՊՌՌ Ինվեստ» ՍՊԸ | 249000 | 0 | 249000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0

Հանձնաժողովը որոշեց

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը և 40-րդ կետի 5-րդ ենթակետը ու «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.

- «Ինտ Մենտաս Գրուպ» ՍՊԸ-ին՝ 1,2,4,6 չափաբաժիններով,
- «Կոմպմարկետ» ՍՊԸ-ին՝ 8 չափաբաժնով:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ ենթակետը՝ 3,5,7 չափաբաժինները հայտարարել չկայացած:

3. Հիմք ընդունելով Կարգի 43-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը՝

ա) ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ,

բ) ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերը:

4. Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/65 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգը 3,5,7 չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

5. Հաջորդ նիստը հրավիրել Կարգի 46-րդ կետով սահմանված ժամկետում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0**

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի նախագահ՝** | | **Հ. Պողոսյան** |
| **Հանձնաժողովի անդամներ՝** | | **Գ. Բոյաջյան** |
| | | **Հ. Ծատուրյան** |
| | | **Տ. Ալեքսանյան** |
| **Հանձնաժողովի քարտուղար՝** | | **Ա. Եղիազարյան** |